ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2026 թվականի բյուջեի ձևավորումը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2026 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն ձևավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով, և ավելացնելով հանձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) գործառույթների, ծրագրերի և միջոցառումների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված նպատակային ծախսերը: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման, տեխնիկական հագեցվածության, հաձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին, իսկ գյուջեի 1%-ի չափով հաշվարկված գումարն (բացառությամբ հաձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) գործառույթների, ծրագրերի և միջոցառումների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված նպատակային ծախսեր) ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով:

Ծրագրի անվանումը՝ **հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում** Ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումները՝	Գումարը (հազ. դրամ)
1. **Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում**	**1 055 538.5**
Ընթացիկ ծախսեր, այդ թվում	**1 055 538.5**
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	950 279.7
Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, ներքին և արտասահմանյան գործուղումների, անդամավճարների, հարկերի և պարտադիր վճարների համար նախատեսված ծախսեր	105 258.8
2. **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում**	**8 170.0**
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր՝ այդ թվում	**8 170.0**
Վարչական սարքավորումներ	8 170.0
Ընդամենը ծախսեր	**1 063 708.5**
3. **Էներգետիկայի բնագավառում նախորդ տարվա ընթացքում իրականացված ներդրումների տեխնիկական աուդիտի իրականացում**	**168 000.0**
4. **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի շենքային պայմանների ապահովում բարելավում**	**17 800.0**
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ	**1 249 508.5**